

**«ԱԼԻ ՄԱՆՇՈՒՐԸ»՝ ՈՐՊԵՄ ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՐԱԳՐՈՂ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ**

*Գայանե Մկրտումյան  
ԵՊՀ արաբագիտության ամբիոն*

«Ալի Մանշուրը» համարվում է վեհապետական հրովարտակ, որն, ըստ ավանդության, Մուհամմադի ու նրա հաջորդների կողմից տրվել է հայ, ինչպես նաև ուրիշ քրիստոնյա համայնքներին, նրանց ազգային եկեղեցական առանձնաշնորհումների պահպանության համար:<sup>1</sup> Այն, որպես Մուհամմադին հաջորդող խալիֆաների՝ Օմար իբն ալ-Խաթթաբի և Ալիի կողմից քրիստոնյա ազգաբնակչության իրավունքները մուսուլմանական տիրապետության տակ ամրագրող փաստաթուղթ, ի հայտ է եկել ավելի ուշ շրջանի քրիստոնեական մատենագիտության մեջ: Այս պայմանագրերի կազմման հիմքում դրվեց Մուհամմադ մարգարեի կողմից Արաբական թերակղզու հրեա և քրիստոնյա բնակչությանը շնորհված, նրանց իրավունքների պաշտպանության ու նրանց նկատմամբ մուսուլմանական համայնքի հովանավորության (զիմմա) մասին դրույթը, որով տեղի բնակիչները ձեռք բերեցին կյանքի, գույքի, դավանանքի ազատություն՝ գլխահարկ և հողահարկ վճարելու պայմանով: Այս առումով կարևորվում է Եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյա բնակչությանը Մուհամմադի կողմից տրված պայմանագիրը, որի մասին հիշատակում են միջնադարյան մուսուլման պատմագիրները:<sup>2</sup> Ըստ այդ պայմանագրի, քրիստոնյա բնակիչները պարտավորվում էին որպես գլխահարկ վճարել հազար հագուստ, մեկ ամսով կացարան տրամադրել մարգարեի դեսպանորդներին, մուսուլմանական համայնքին

---

<sup>1</sup> Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագրության մեջ, Վիեննա, 1930թ., էջ 27:

<sup>2</sup> Al –Balazuri, Kitab al-futuhi al-buldan, Bairut, 1958, p. 71, Ibn al-Athir. Al-Kamil fi al-tarikh, II, Kahira, 1349 hijra, p. 200.

տրամադրել 30 ձի, 30 օղազրահ, 30 ուղտ, եթե Եմենում լինեին դավաճանական խարդավանքներ: Երաշխավորվում էր, որ վանականը չէր հեռացվի իր վանականությունից, եպիսկոպոսը՝ եպիսկոպոսությունից, չէին փոխվի քրիստոնյաների սովորույթները: Նաջրանի քրիստոնյա բնակչության վրա տարածվում էր Ալլահի հովանավորությունը և Մուհամմադ մարգարեի պաշտպանությունը հավիտյանս՝ մինչև Ահեդ Դատաստանի օրը:<sup>3</sup> Այսպես, վերոհիշյալ պայմանագրի պայմանների շարադրանքը բնորոշ է միջնադարյան մուսուլմանական պատմագրությանը:

Բացի Նաջրանի քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրի այս «մուսուլմանական» տարբերակից, առկա է նաև պայմանագրի մի այլ՝ «քրիստոնեական» տարբերակ՝ զետեղված «Նեստորական ժամանակագրության» մեջ: Այն գրված է արաբերենով, սիրիայի քրիստոնյայի կողմից: Ձեռագիրը թվագրվում է 13-րդ դարով:<sup>4</sup>

Պայմանագրի այս տարբերակը զգալիորեն տարբերվում է նախորդից իր ծավալով, կառուցվածքով, չափով և բովանդակությամբ: Եթե նախորդ պայմանագիրը նախատեսված էր միայն Եմենի Նաջրան քաղաքի քրիստոնյաների համար, ապա Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակում մարգարեն պայմանագիր էր կնքում բոլոր նրանց հետ, ովքեր դավանում են քրիստոնեությունը, այն իր հերթին օրինակ պետք է ծառայեր հետագա դարերի մուսուլմանների սերունդների համար ևս, որ ճանաչեին քրիստոնյաների իրավունքները և հովանավորեին նրանց: Պայմանագրում նշվում է, որ եպիսկոպոսը չի հեռացվի իր եպիսկոպոսությունից, վանականը՝ վանականությունից, բնակիչները պարտավորվում էին ամեն տարի, որպես հարկ, վճարել 4 դիրհեմ կամ շերտավոր հագուստ, իսկ հարուստ հողատերերը՝ 12 դիրհեմ:<sup>5</sup> Նաջրանի պայմանագրի այս տարբերակում, ինչպես երևում է,

<sup>3</sup> Al –Balazuri, Kitab al-futuhi al-buldan, Bairut, 1958, p. 72.

<sup>4</sup> Historie Nestorienne (Chronique de Se°ert), II, In: Patrologia orientalis, Paris, 1919, t. 13, p. 601-618.

<sup>5</sup> Nameha wa pimanhaye siyasi hadrate Muhammad, Tehran, 1999, p. 230.

նշվում է գլխահարկի կոնկրետ չափը, մինչդեռ Մուհամմադի կողմից Արաբական թերակղզու քրիստոնյա և հրեա բնակչությանը տրված պայմանագրերում չի նշվում գլխահարկի կոնկրետ չափ՝ ըստ բնակիչների վճարողունակության աստիճանի, այն հաճախ գանձվում էր բնամթերքով: Նշենք, որ քրիստոնյա բնակիչներից հարկերի գանձման նման սիստեմատիկ մեթոդը, կոնկրետ գումարի չափով, ըստ բնակիչների կարողության չափի, մշակվել է ավելի ուշ, մուսուլման իրավագետների կողմից:<sup>6</sup> Քրիստոնյաները պարտավորվում էին 3 օր ու զիշեր կացարան տրամադրել մուսուլմաններին, անհրաժեշտության դեպքում՝ թաքցնել նրանց իրենց տներում, կերակրել, չմատնել թշնամուն և այլն: Պայմանագրին լրջություն և հանդիսավորություն հաղորդելու համար ժամանակագրության հեղինակը, որպես պայմանագրի կնքման վկաներ, հիշատակում է չորս ուղղադավան խալիֆաներին: Նշենք, որ Նաջրանի պայամնագրի «քրիստոնեական» տարբերակում այդ պայամնագիրը բոլոր քրիստոնյաների համար ընդհանարական դարձնելու ձգտումն ակնհայտ է, և այս իմաստով այն հակադրվում է միջնադարում նվաճված երկրների քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերին:

Ըստ մի շարք հետազոտողների, Նաջրանի պայամնագրի «քրիստոնեական» տարբերակի ի հայտ գալն Արաբական Խալիֆայության կազմի մեջ մտնող քրիստոնյա մի շարք երկրների բնակչության բողոքի արտահայտությունն էր եկեղեցու իրավունքներն ու շահերը ոտնահարող մուսուլմանական իշխանությունների դեմ:<sup>7</sup> Արդեն ներկայացված շարադրանքից պարզ դարձավ, որ դեռևս միջնադարում քրիստոնյաները (մասնավորապես՝ հոգևոր դասը) Մուհամմադ մարգարեի անունով կազմել են պայմանագրեր («Ալի Մանշուր»)՝ պաշտպանելու համար իրենց իրավունքներն ու ստացվածքները մուսուլմանների ոտնձգություն-

---

<sup>6</sup> Kremer A., Culturgeschichte des Orients unter den Chalifen Wien, 1875, p. 200.

<sup>7</sup> Колесников А., Две версии договора Мухаммада с христианами Наджрана в сб. Полестинский сборник вып. 28(91) Ленинград, 1986, с.33.

ներից: Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի կազմման համար հենց հիմք է հանդիսացել պայմանագրի բնօրինակը՝ վկայված մուսուլմանական պատմագրության մեջ: Նշենք, որ վերոհիշյալ պայմանագիրն իր 2 տարբերակներով ուսումնասիրության է ենթարկվել մեր կողմից:<sup>8</sup>

Այս առումով ուշադրության է արժանի նաև 7-րդ դարի անանուն սիրիական ժամանակագրության մեջ գետեղված, Օմար իբն ալ-Խաթթաբ խալիֆային վերագրված Մադաինի (Տիզբոն) և Նահրբիբի բնակչությանը տրված պայմանագիրը, որը խալիֆան շնորհել էր Յաշոյաբ երկրորդ կաթողիկոսին:<sup>9</sup> Ըստ վերոհիշյալ պայմանագրի, ապահովություն էր տրվում տեղի բնակիչների կյանքին, գույքին, դավանանքին, նշվում էր, որ վանականը կամ հոգևորականը չի հեռացվի իր պաշտոնից, ոչ մի եկեղեցի կամ աղոթատուն չի քանդվի, ոչ մի շինություն մզկիթ չի դառնա:<sup>10</sup> Այս պայմանագրում ևս հիշատակվում են Նաջրանի պայմանագրի «քրիստոնեական» տարբերակի հիմնական դրույթները՝ մուսուլմաններին կացարան տրամադրել, կերակրել նրանց, լրտեսներ չլինել թշնամու համար, նրանց իրենց տունը չպահել և այլն: Պայմանագրում շեշտվում էր նաև քրիստոնյաների դրական դերը, որոնք բարիք էին գործել՝ օգնելով մուսուլմաններին: Պայմանագիրն ուժի մեջ էր մինչև Ահեդ Դատաստանի օրը, թվագրված էր հիջրայի 17թ. (638-639թթ.) և վկայված էր Օսման իբն Աֆֆանի և Մուդիրա իբն Շու'ուբայի կողմից: Այս պայմանագիրը ևս կարելի է համարել «Ալի Մանշուր» կազմված քրիստոնյա հոգևոր դասի կողմից իրենց իրավունքների պաշտպանության համար:

Մուհամմադ մարգարեին վերագրվող ևս մի պայմանագրի օրինակ պահպանվում է Սինա լեռան մոտ գտնվող Ս. Եկատերինա վանքի թանգարանում: Ըստ ավանդույթի, վանքի վանականներ-

<sup>8</sup> Մկրտումյան Գ., Մուհամմադ մարգարեի կողմից Նաջրանի քրիստոնյա համայնքին տրված պայմանագիրը, Արաբագիտական հետազոտություններ, Բ, Երևան, 2007. էջ 106-110:

<sup>9</sup> Пигулевская Н., Культура сирийцев в средние века, Москва, 1979, с. 214.

<sup>10</sup> Колесников И., Завоевание Ирана арабами, Москва, 1982, с. 215-216.

րը 625թ. պատվիրակությունն են են ուղարկել Մադինա՝ իսլամի մարգարեից ապահովություն և հովանավորություն խնդրելու:<sup>11</sup> Ըստ այդ փաստաթղթի, վանականները ազատվում էին հարկերից: Հետագոտողների կարծիքով Մուհամմադին վերագրվող այս փաստաթուղթը կեղծված է և ի հայտ է եկել Ֆաթիմյան խալիֆայության օրոք Եգիպտոսում (969-1171թթ.):<sup>12</sup> Նրանց կարծիքով այդ կեղծ փաստաթուղթը կազմվել է աբբասյան Հաքիմ խալիֆայի օրոք (996-1021թթ.), որը դաժան էր վարվում հրեաների ու քրիստոնյաների հետ: Նրա կառավարման օրոք Եգիպտոսում շատ վանքեր ու եկեղեցիներ ոչնչացվեցին: Այդ ժամանակ վանքի վանականները Ս. Եկատերինա վանքից 10 մետր հեռավորության վրա մի մզկիթ կառուցեցին, և այս փաստը խալիֆային հետ պահեց իր մտադրությունից: Հենց այս պահին էլ, ըստ հետագոտողների, վանքի վանականներին անհրաժեշտ դարձավ ձեռքի տակ ունենալ Մուհամմադի անունով մի փաստաթուղթ, որը կերաշխավորեր վանքի վանականների իրավունքները մուսուլմանական տիրապետության տակ:

Նմանատիպ պայմանագրի մի օրինակ էլ գտնվում է Եգիպտոսի Թուր եկեղեցու գրադարանում, որը կրում է 814 թվահամարը:<sup>13</sup> Այս փաստաթղթում ևս կրկնվում են վերոհիշյալ պայմանագրերի հիմնական դրույթները, որ ոչ մի վանական չի գրկվի իր վանականությունից, հոգևորականը՝ իր հոգևորականությունից, քրիստոնյա բնակչությունը պարտավորվում էր որպես գլխահարկ վճարել 4 դիրհեմ, հարուստ հողատերերը՝ 12 դիրհեմ, նրանք պետք է օթևան և կերակուր տային մուսուլման ճամփորդին և այլն: Հայտնի է նաև Մուհամմադին վերագրված և ասորի ու դպտի քրիստոնյաներին տրված պայմանագիրը, որի մեջ ևս կրկնվում են վերոհիշյալ պայմանները:<sup>14</sup>

---

<sup>11</sup> Крылов А., Монастырь, Св. Екатерины на Синае, Вестник Мовесковского университета, Москва, 1991/4, серия 12, с. 60

<sup>12</sup> Նույն տեղում

<sup>13</sup> Nameha wa pimanhayе siyasi hadrate Muhammad, p. 632

<sup>14</sup> Նույն տեղում, p. 629

«Ալի Մանշուրը»՝ որպես վեհապետական հրովարտակ, տրված իսլամի մարգարեի կողմից, հայտնի է նաև հայկական միջնադարյան պատմագրությանը: Սկսած 12-րդ դարից, հայ պատմագիրները հիշատակում են Մուհամմադի կողմից հայկական համայնքներին տրված պայմանագրերի մասին, որոնք հայ մատենագրության մեջ հայտնի են «Մեծ Մանշուր» և «Փոքր Մանշուր» անուններով:<sup>15</sup>

Այս պայմանագրերի կազմման համար, մեր կարծիքով, հիմք է հանդիսացել Օմար իբն ալ-Խաթթաբ խալիֆայի կողմից Երուսաղեմի քրիստոնյա, մասնավորապես՝ հայկական համայնքին տրված պայմանագիրը, որով տեղի հայերը ձեռք էին բերում կյանքի, գույքի ազատություն՝ ստանալով մի շարք իրավունքներ քաղաքի մի շարք սրբավայրերի նկատմամբ:

Այսպիսով, վերոհիշյալ ալի մանշուրները հիմնականում կազմվում էին քրիստոնյա համայնքների առաջնորդների կողմից՝ որոշակի քաղաքական նկատառումներից ելնելով, պաշտպանելու համար իրենց իրավունքները մուսուլմանական իշխանությունների ոտնձգություններից՝ ընդդեմ քրիստոնյա բնակչության իրավունքների սահմանափակումների: Այդ պայմանագրերի հիմքում դրվում էին Մուհամմադի՝ Արաբական թերակղզու հրեա և քրիստոնյա բնակչությանը տրված պայմանագրերի, ինչպես նաև մուսուլմանական նվաճումների ընթացքում նվաճված երկրների քրիստոնյա բնակչությանը մուսուլման գորահրամանատարների կողմից տրված պայմանագրերի պայմանները՝ պատմական իրավացիություն հաղորդելու այդ փաստաթղթերին: Այդ պայմանագրերում ընդգծվում է քրիստոնյաների դրական դերը մուսուլմանների նկատմամբ, առկա է նաև միտում այդ պայմանագրերը համընդհանուր դարձնելու բոլոր քրիստոնյաների համար:

---

<sup>15</sup> Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագիտության մեջ, էջ 122

**«Али Маншур» как договор, закрепляющий права христианских общин в период мусульманского господства.**

*Гаянэ Мкртумян  
ЕГУ, кафедра арабистики*

«Али Маншур» считается основополагающим указом, данным Мухаммедом и его последователями христианским общинам для сохранения их национальных, церковных привилегий. Это проявилось в христианской библиографии позднего периода, в основе которой заложены основные положения договоров, данных христианским и еврейским жителям Арабского полуострова пророком Мухаммедом: покровительство пророка и мусульманской общины и защита прав этих жителей.